

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-013-24.08.2021-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 64-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 1.1-ին մասով, համաձայն որի՝ զինծառայողների առողջական վիճակի հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման պահանջների համաձայն՝ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննությունն իրականացնում են գերատեսչական հոսպիտալային և կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովները, իսկ քաղաքացիական բժշկական հաստատությունները նման փորձաքննություն չեն իրականացնում: Բացի այդ, օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում, իսկ քաղաքացիական բուժհաստատություններում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության և սպասարկման հիմքը սահմանված է օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում, բժշկական օգնության և սպասարկման պայմանները և չափորոշիչները, սոցիալական փաթեթի առողջապահական ուղղությունը սահմանված են ՀՀ կառավարության 2004 թ. մարտի 4-ի N 318-Ն, 2012 թ. դեկտեմբերի 27-ի N 1691-Ն և 2013 թ. հուլիսի 25-ի N 806-Ն որոշումներով, դրանց շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Զինծառայողներին,

ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացվում է հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված կարգով՝ պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով՝ ֆինանսական փոխհատուցումն իրականացնելով փաստացի մատուցված ծառայությունների ծավալին համապատասխան, որի պարագայում համապատասխան շահառուներին բժշկական օգնությունը և սպասարկումը փաստացի իրականացվում է դիմելու կամ ուղեգրման հիմքով՝ առանց հերթագրման:

Միաժամանակ օրենքի նախագծով առաջարկվող լրացման բովանդակությունը չի համապատասխանում օրենքի նախագծի հիմնավորմամբ ներկայացված օրենքի նախագծի ընդունման նպատակին, քանի որ փաստացի սահմանում է այլ հարաբերություններ, քան օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումներն են, որի արդյունքում օրենքի նախագծի ընդունման պարագայում կստեղծվի իրավիճակ, երբ զինծառայողները, առանց առաջնային կարգով ռազմաբժշկական հաստատություններում հետազոտում և (կամ) բուժում անցնելու, կդիմեն քաղաքացիական բուժհաստատություններ՝ դրանով իսկ խաթարելով թե օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ու դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի պահանջների իրացումը, և թե զինվորական ծառայության պատշաճ կազմակերպման գործընթացը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով լրացվող՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածը թողնել անփոփոխ: